ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ո՞ր տարածաշրջանում *չկան* միապետություններ։**

1) Լատինական Ամերիկա
2) Հյուսիսային Աֆրիկա
3) Հարավարևելյան Ասիա
4) Հարավային Եվրոպա

2 **Ո՞ր տարածաշրջանում են գրանցվել մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ամենաբարձր ցուցանիշները։**

1) Արևադարձային Աֆրիկա
2) Արևմտյան Եվրոպա
3) Լատինական Ամերիկա
4) Հարավարևելյան Ասիա

3 **Արդյունաբերության ո՞ր ճյուղի ձեռնարկությունների տեղաբաշխման մեջ կարևորագույն տեղ ունի վառելիքաէներգետիկ գործոնը։**

1) թեթև արդյունաբերություն
2) մեքենաշինություն
3) գունավոր մետաղաձուլություն
4) նավթավերամշակում

4 **«Նեղուց-միացվող ջրային ավազաններ» շարքերից ընտրել *սխալը*.**

1) Մալակկայի նեղուց—Անդամանյան և Հարավչինական ծովեր
2) Հորմուզի նեղուց — Պարսից ծոց և Օմանի ծոց
3) Մագելանի նեղուց—Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսներ
4) Բերինգի նեղուց—Ճապոնական և Բերինգի ծովեր

5 **Աշխարհի բնակչության քանի՞ տոկոսն է ապրում քաղաքներում։**

1) մոտավորապես 90%
2) 40%-ից քիչ
3) մոտավորապես 75%
4) 50%-ից շատ

6 **«Օվկիանոս—փողրակ» զույգերից ո՞րն է *սխալ*.**

1) Հյուսիսային սառուցյալ—Չուկոտյան
2) Հնդկական—Զոնդյան
3) Խաղաղ—Մարիանյան
4) Ատլանտյան—Պուերտո Ռիկո

7 **«Լեռնաշղթա—վտակ—գետ—գետաբերան» զույգերից ընտրել *սխալը*.**

1) Ուրալյան լեռներ—Անգարա—Ենիսեյ—Հյուսիսային սառուցյալ օվկիանոս
2) Մեծ Զրբաժան լեռներ—Դառլինգ—Մուրեյ— Մեծ ավստրալական ծոց
3) Անդերի լեռնաշղթա—Մարանիոն—Ամազոն—Ատլանտյան օվկիանոս
4) Ժայռոտ լեռներ—Միսսուրի—Միսիսիպի—Մեքսիկական ծոց

8 **Ո՞ր երկիրը *չի* սահմանակցում Ֆրանսիայի հետ:**

1) Գերմանիա
2) Դանիա
3) Լյուքսեմբուրգ
4) Բելգիա

9 **Ո՞ր պետությունն է հայտնվել քաղաքական քարտեզի վրա 20-րդ դարի 90-ականներին:**

1) Կուբա
2) Հարավային Սուդան
3) Չեխիա
4) Հյուսիսային Կորեա

10 **«Պետություն—պաշտոնական լեզու» շարքերից ո՞րն է *սխալ*.**

1) ՀԱՀ—անգլերեն
2) Բրազիլիա—պորտուգալերեն
3) Ավստրիա—ֆրանսերեն
4) Մեքսիկա—իսպաներեն

11 **Թվարկված երկրներից որու՞մ է գերակշռում քրիստոնեության կաթոլիկ ուղղությունը.**

1) Շվեդիա և Իռլանդիա
2) ԿԴՀ և Ֆիլիպիններ
3) Նորվեգիա և Ավստրիա
4) ՀԱՀ և Հունաստան

12 **Հետևյալ երկրների շարքերից ո՞րն է բազմազգ:**

1) Ինդոնեզիա և Նիգերիա
2) Արգենտինա և Գերմանիա
3) Ռուսաստան և Ալժիր
4) Բրազիլիա և Ֆրանսիա

13 **Հետևյալ երկրներից ո՞րն ունի բնակչության ամենացածր միջին խտությունը:**

1) Մոնղոլիա
2) Իրան
3) Նիգերիա
4) Ֆրանսիա

14 **Ո՞ր երկիրն ունի ուրբանիզացման ամենաբարձր մակարդակը:**

1) Պորտուգալիա
2) Իտալիա
3) Ճապոնիա
4) Հնդկաստան

15 **Հետևյալ երկրներից ո՞րն ունի ՄԶՀ ամենաբարձր ցուցանիշը:**

1) Մեքսիկա
2) Սոմալի
3) Ֆիլիպիններ
4) Շվեդիա

16 **Ո՞ր երկիրն է բնորոշում հետևյալ նկարագրությունը։**

Այստեղ է գտնվում աշխարհի ամենամեծ մեգալոպոլիսը, որտեղ կենտրոնացված է երկրի բնակչության կեսից ավելին։ Ամենաքիչ ապահովված երկրներից է բնական ռեսուրսներով։ Ծովային տրանսպորտը լայնորեն կիրառվում է արտաքին աշխարհի հետ կապերի համար։ Տնտեսության միջազգային մասնագիտացման ճյուղերն են միկրոէլեկտրոնիկան, ռոբոտաշինությունը, ավտոմոբիլաշինությունը և պողպատաձուլությունը։ Աշխարհի միազգ երկրներից է։ Ամենախիտ բնակեցվածներից է։ Պետական կարգով սահմանադրական միապետություն է։ Ներգաղթի համար գրավիչ չէ։

1) Ճապոնիա
2) Ինդոնեզիա
3) Մալայզիա
4) Չինաստան

17 **Թվարկված երկրներից ո՞րը *չի* գտնվում գեոսինկլինալային գոտում։**

1) Նեպալ
2) Հայաստան
3) Շվեյցարիա
4) Ուրուգվայ

18 **Թվարկված երկրներից ո՞րը *չի* մտնում առաջին տասնյակի մեջ քաղցրահամ ջրի պաշարներով։**

1) Ուզբեկստան
2) Բրազիլիա
3) Ռուսաստան
4) Կանադա

19 **Նշվածներից ո՞րն է տարածքային վեճի խաղաղ լուծման օրինակ։**

1) Կուրիլյան կղզիներ
2) Տրիեստ
3) Ֆոլկլենդյան կղզիներ
4) Քաշմիր

20 «Մշակաբույս—հայրենիք—առաջատար երկիր» շարքերից որո՞ւմ կա *անհամապատասխանություն։*

1) սուրճ—Եթովպիա— Բրազիլիա
2) բրինձ—Չինաստան—Չինաստան
3) եգիպտացորեն—Մեքսիկա—Ռուսաստան
4) ցորեն—Հայաստան—Չինաստան

21 Ո՞ր մարզում է գտնվում «Արևիկ» ազգային պարկը։

1) Կոտայք
2) Շիրակ
3) Տավուշ
4) Սյունիք

22 Նշվածներից ո՞ր հուշարձանն է գտնվում Շիրակի մարզում։

1) Հալիձորի բերդ
2) Վահրամաբերդ
3) Պռոշաբերդ
4) Որոտնաբերդ

23 Նշվածներից ո՞ր վանական համալիրն է գնվում Վայոց ձորի մարզում։

1) Գոշավանք
2) Լմբատավանք
3) Գնդեվանք
4) Վահանավանք

24 Նշվածներից ո՞ր լեռնաշղթան է ամբողջությամբ գտնվում Տավուշի մարզում։

1) Բովաքարի լեռներ
2) Թեքսարի լեռներ
3) Մթնասարի լեռներ
4) Երանոսի լեռներ

25 **Նշվածներից ո՞ր գետն է հոսում Արարատի մարզով։**

1) Գեղարոտ
2) Արածո
3) Հախում
4) Ծակքար

26 **Նշվածներից ո՞ր մարզն ունի քրոմիտի պաշարներ։**

1) Գեղարքունիք
2) Սյունիք
3) Արագածոտն
4) Կոտայք

27 **Նշվածներից ո՞ր սարավանդը չի գտնվում Արագածոտնի մարզում։**

1) Թալինի
2) Կարմրաշենի
3) Եղվարդի
4) Շամիրամի

28 **Նշվածներից ո՞ր կենդանին *չի* հայտնվել «Միջազգային Կարմիր գրքում»։**

1) հայկական իժ
2) գանգրափետուր հավալուսն
3) հայկական մուֆլոն
4) սպիտակապոչ արծիվ

29 **Ո՞ր թվականին հաստատված օրենքով Երևանը ստացավ համայնքի կարգավիճակ։**

1) 2015թ.
2) 1929թ.
3) 1995թ.
4) 2009թ.

30 **Նշվածներից ո՞ր գետի վրա է կառուցվել Տոլորսի ջրամբարը։**

1) Որոտան
2) Թարթառ
3) Ախուրյան
4) Կարկառ

31 **Նշվածներից որո՞նք *չեն* համարվում նոր արդյունաբերական երկրներում տնտեսական քաղաքականության ուղղություններ.**

1) վարկային բարձր տոկոսադրույքների սահմանում տարբեր ձեռնարկությունների համար
2) աշխատանքի բարձր արտադրողականության խթանում
3) ազատ շուկայի ու ձեռներեցության զարգացման խթանում
4) տնտեսության զարգացմանը արդյունավետ պետական միջամտություն
5) ներկրումը խթանող հատուկ ընկերությունների հիմնում
6) արտասահմանյան կապիտալի ներգրավման արտոնյալ պայմանների ստեղծում
7) հարկային մեծ դրույքաչափերի սահմանում

32 **Նշվածներից որո՞նք զարգացած երկրների բնութագրիչ *չեն* .**

1) աշխատանքային ռեսուրսների մեծ ներգրավվածություն գյուղատնտեսության մեջ
2) շուկայական հարաբերությունների զարգացման հասուն մակարդակ
3) հանքարդյունաբերությունը, որպես օրենք, բնորոշ չէ
4) տնտեսության մեջ ծառայությունների ոլորտի գերակշռություն
5) մշակող արդյունաբերության գիտատար ճյուղերի գերակշռություն
6) բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծ ցուցանիշ
7) երկարակեցության բարձր ցուցանիշ

33 **Որո՞նք են մարդկային զարգացման համաթվի գլխավոր բաղադրիչները**

1) հանցավորության մակարդակ
2) կյանքի միջին տևողություն
3) մեկ մարդու հաշվով ՀՆԱ - ն
4) առողջապահության մատչելիություն
5) կրթական մակարդակ
6) մշակույթի մատչելիություն
7) սոցիալական պաշտպանվածություն

34 **ՀՀ կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումներն են ճիշտ.**

1) Ցյունամերձ լեռնային կլիման ձևավորվում է 2500 մ-ից սկսված։
2) Ցածրադիր գոտում ձմեռը կարճատև է՝ դեկտեմբերից մինչև փետրվարի վերջ։
3) Հանրապետության ծայր հարավում և հյուսիս-արևելքում կլիման խոնավ մերձարևադարձային է։
4) Ցուրտ լեռնային կլիմայի պայմաններում տարածվում է մերձալպյան և ալպյան լանդշաֆտը։
5) Չափավոր շոգ կլիման տարածվում է մինչև 1300 մ բարձրությունները։
6) Չոր ցամաքային կլիման տարածվում է Գեղարքունիքի մարզում։
7) Ամառը ցածրադիր գոտում տևում է մայիսի երկրորդ կեսից մինչև հոկտեմբերի սկիզբ։

35 **Տրված պնդումներից որո՞նք են *սխալ։***

1) Իզոթերմերը առաջին անգամ ի հայտ եկան Հումբոլդտի քարտեզներում։
2) Աշխարհագրական հետազոտությունների մեթոդները աշխարհագրական մշակույթի բաղադրիչներից են։
3) Աշխարհի աշխարհագրական պատկերը բազմակիորեն ներկայացնում է Երկրի աշխարհագրական թաղանթի, բնության և հասարակության փոխազդեցության ամբողջական պատկերը։
4) Տարածականությունը աշխարհագրական գիտության լեզվի բաղադրիչներից է։
5) Կոնկրետությունը աշխարհագրական մտածողության հիմնական հատկանիշներից է։
6) Համագիտական մեթոդներից է քարտեզագրական մեթոդը։
7) Դաշտային հետազոտության եղանակներն են անշարժ, կիսաանշարժ և երթուղային։

36 **Երկրի տարեկան պտույտի վերաբերյալ ո՞ր պնդումներն են *սխալ:***

1) Երկրի տարեկան պտույտի հետևանքով առաջանում է Կորիոլիսի ուժը:
2) Երկրի առանցքի թեքությունը ամբողջ պտույտի ընթացքում չի փոխվում:
3) Չորս տարին մեկ փետրվարն ունենում է 28 օր:
4) Արեգակի ճառագայթների անկման անկյունը Հյուսիսային բևեռում հունիսի 22-ի կեսօրին 23,5°է:
5) Հարավային բևեռային շրջագծի վրա բևեռային ցերեկ լինում է դեկտեմբերի 22 - ին:
6) Բևեռային ցերեկների տևողությունը բևեռային շրջագծերի վրա 6 ամիս է:
7) Երկիրը հեռակետում լինում է հունվարի 3-ին:

37 **Քամիների վերաբերյալ ո՞ր պնդումներն են *սխալ:***

1) Բրիզները օրվա ընթացքում 2 անգամ ուղղությունը փոխող քամիներ են:
2) Պասսատները հասարակածից դեպի արևադարձեր փչող մշտական ուղղություն ունեցող քամիներն են:
3) Տոռնադոները ձևավորվում են տաք և սառը օդային զանգվածների հանդիպման շրջաններում:
4) Աշխարհում ամենահզոր անտիցիկլոնը Սիբիրականն է:
5) Ամառային մուսսոնները փչում են ցամաքից դեպի օվկիանոս, իսկ ձմեռայինները՝ հակառակը:
6) Քամիների վարդը հաշվի է առնվում թունավոր արտանետումներ ունեցող գործարանների տեղադիրքը որոշելիս:
7) Լեռնահովտային քամիները ցերեկը լեռներից հովիտներ են փչում, գիշերը՝ հակառակը:

38 **Անասնապահության վերաբերյալ ո՞ր պնդումներն են ճիշտ։**

1) Խոզաբուծության զարգացմամբ առաջատար երկրներ են Ինդոնեզիան, Նիգերիան, Թուրքիան։
2) Անասնապահության առաջատար ճյուղը խոշոր եղջերավոր անասնապահությունն է։
3) Մեղվաբուծության առաջատար երկրներն են Հայաստանը, Վենեսուելան, Լեհաստանը։
4) Ավստրալիայում տարածված է մերինոս ցեղի ոչխարաբուծությունը։
5) Հարավաֆրիկյան Հանրապետությունը աշխարհում առաջատար է կարակուլի մորթիների արտադրությամբ։
6) Շերամապահության հայրենիքը Իրանն է։
7) Ձկան որսով և ծովամթերքի արդյունահանմամբ առաջատար երկրներն են Բրազիլիան, Մալայզիան, Ավստրալիան։

39 **Համաշխարհային օվկիանոսի վերաբերյալ ո՞ր պնդումներն են *սխալ։***

1) Ատոմային սուզանավերի վթարները, ափամերձ ատոմակայանների հեղուկ թափոնները օվկիանոսը վարակում են ռադիոակտիվ նյութերով։
2) Ձկնարդյունաբերության թափոնները անդառնալի հետևանքներ են ունենում օվկիանոսի ջրի որակի վրա։
3) Աղտոտիչների մեջ գլխավոր տեղ են զբաղեցնում նավթի արդյունահանումը և տեղափոխումը։
4) Գյուղատնտեսական պարարտանյութերը և թունաքիմիկատները ընդհանրապես չեն ազդում օվկիանոսի վրա։
5) Օվկիանոսային ջրերում սնդիկի և կապարի անընդհատ ավելացումը հանգեցնում է կենդանի օրգանիզմների ոչնչացմանը։
6) Տնտեսական գոտիների ներդրումը խթանեց Համաշխարհային օվկիանոսում ձկնային պաշարների ավելացմանը։
7) Նավթային թաղանթների առաջացումը խախտում է ջրի գազաջերմափոխանակությունը, նվազեցնում գոլորշացումը։

40 **ՀՀ վառելիքաէներգետիկ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումներն են *սխալ:***

1) Զգալի քանակությամբ էլեկտրաէներգիա ՀՀ—ն արտահանում է Իրան և Վրաստան:
2) Ջաջուռի, Իջևանի ածխի հանքերը և Վարդենիսի տորֆի հանքը ունեն արդյունաբերական նշանակության հարուստ պաշարներ:
3) Բնական գազը ներկրվում է Իրանից և Ռուսաստանից:
4) Առաջին ջրաէլեկտրակայանը կառուցվել է Ախուրյան գետի վրա:
5) Արդյունաբերության ճգնաժամով պայմանավորված՝ էլեկտրաէներգիայի սպառման ծավալները նվազել են:
6) Էլեկտրաէներգայի արտադրության կառուցվածքում առաջատարը ջերմային էներգետիկան է:
7) Ջրային, արևային և հողմային էլեկտրակայանները կարող են աշխատել նույնիսկ տրանսպորտի լիակատար շրջափակման պայմաններում:

41 **Պարենային հիմնախնդրի վերաբերյալ ո՞ր պնդումներն են *սխալ:***

1) Սովի ու թերսնման վերացման հիմնախնդրով զբաղվում է ՄԱԿ-ի հատուկ մասնագիտացված կազմակերպությունը՝ՅՈՒՆԵՊ-ը:
2) Պարենային հիմնախնդիրը ազդում է հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա և լուրջ վտանգ է ներկայացնում տասնյակ պետությունների համար:
3) Հողի բերրիության նվազման հիման վրա է Թոմաս Մալթուսը կառուցել իր տեսությունը:
4) Պարենային հիմնախնդիրը չափազանց սրվել է «ժողովրդագրական ճգնաժամի» հետևանքով:
5) Գիտնականների հաշվարկներով՝ մեկ մարդուն օրական միջին հաշվով անհրաժեշտ է ոչ պակաս, քան 1400 կկալ պարունակող բազմապիսի սնունդ:
6) Պարենային հիմնախնդիր գոյություն ունի բոլոր երկրներում:
7) Խնդրի էությունը համամոլորակային մասշտաբով պարենամթերքի ճիշտ վերաբաշխումն է և նպատակային օգտագործումը:

42 **Միջազգային տնտեսական հարաբերությունների վերաբերյալ ո՞ր պնդումներն են *սխալ:***

1) Համաշխարհային առևտուրը համակարգվում է Առևտրի համաշխարհային կազմակերպության կողմից, որին անդամակցում է 164 երկիր՝ 2016թ.-ի դրությամբ:
2) Միջազգային տնտեսական հարաբերությունները համաշխարհային տնտեսության մեջ առանձին երկրների ազգային տնտեսությունների, միջազգային տնտեսական կազմակերպությունների, ֆինանսական կենտրոնների միջև ձևավորված տնտեսական և այլ կապերի համակարգն է:
3) Միջազգային տնտեսական հարաբերությունները հաճախ անվանում են համաշխարհային տնտեսության «արյունատար համակարգ»:
4) Ներկայումս միջազգային տնտեսական հարաբերություններում հիմնականը Հյուսիս—Հարավ ուղղությունն է, որտեղ առաջատարը Հարավն է:
5) Որևէ երկրի տնտեսական ներգրավվածությունը միջազգային տնտեսական հարաբերություններում արտահայտվում է ներկրման մասնաբաժնով:
6) Արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացման համար շատ կարևոր է փողի փոխարկելիությունը, տվյալ երկրի դրամը որոշակի փոխարժեքով այլ երկրի դրամի հետ փոխանակելու հնարավորությունը և հակառակը:
7) ԳՏՀ ազդեցությամբ միջազգային առևտրի ապրանքային կառուցվածքում աճել է վառելիքի, հումքի և պարենամթերքի բաժինը, նվազել՝ պատրաստի արտադրանքի բաժինը:

43 **Գետի ծախսը 2 ժամում կազմել է 1 036 800 մ³ ջուր, գետի կենդանի կտրվածքի մակերեսը 18 մ² է: Հաշվել գետի ջրի արագությունը:**

44 Գետի ակունքի բացարձակ բարձրությունը 3400 մ է, իսկ գետաբերանի բացարձակ բարձրությունը՝ 800մ: Գետի միջին թեքությունը 20մ/կմ է: Որոշել գետի երկարությունը:

45 Երկրում ցորենի միջին բերքատվությունը 50 ց/հա է, իսկ ստացված բերքի քանակը՝ 25 մլն տոննա: Որքա՞ն է ցորենի ցանքատարածությունների մակերեսը:

46 Երկրի ածխի պաշարները 15 մլն տ են, իսկ տարեկան արդյունահանումը՝ 30 000 տ: Որքա՞ն է երկրի ռեսուրսապահովվածությունը:

47 Երկրում ապրում է 12 մլն մարդ, իսկ գյուղերում՝ 2 400 000 մարդ: Որքա՞ն է այդ երկրի ուրբանիզացման մակարդակը:

48 Երկու քաղաքների միջև տեղական ժամանակների տարբերությունը կազմում է 48 րոպե: Քանի՞ աստիճան է կազմում նրանց միջև եղած հեռավորությունը:

49 Երկրի բնակչության թիվը 25 մլն. է, ծնելիության գործակիցը՝ 11 ‰, մահացության գործակիցը՝ 7 ‰, ներգաղթել է 900 000 մարդ, արտագաղթել՝ 400 000: Որքա՞ն կլինի այդ երկրի բնակչության թիվը մեկ տարի հետո:

50

1 : 5000 000 մասշտաբ ունեցող քարտեզում երկիրն ունի 40 սմ² տարածք: Այդ երկրի ավտոճանապարհների երկարությունը 200 000 կմ է: Որքա՞ն է այդ երկրի տրանսպորտային ցանցի միջին խտությունը:

51

Մարզի բնակչության միջին խտությունը 20 մարդ/կմ² է, իսկ տարածքի մակերեսը՝ 2400 կմ²: Գյուղատնտեսական հողահանդակների մակերեսը 144000 հա է: Քանի՞ հեկտար գյուղատնտեսական հողահանդակ է բաժին ընկնում յուրաքանչյուր բնակչին:

52

Քանի՞ կգ նավթ է պետք այրել 45մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա ստանալու համար: Նավթի ջերմային գործակիցը 1,5 է:

53 Օդի բացարձակ խոնավությունը 40 գ/մ³ է, իսկ հարաբերական խոնավությունը՝ 80 %: Որոշել ամբողջապես հագեցման համար անհրաժեշտ պակասող ջրային գոլորշիների քանակը:

(54 – 55) Քաղաքում օրվա ընթացքում օդի ջերմաստիճանը չափել են և ստացել են -1°, -4°, -6°, -2°, +7°, +16°, +10°, +4° ցուցանիշները:

54 Որոշել ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը:

55 Որոշել օրական միջին ջերմաստիճանը:

56 Երկու քաղաքներ գտնվում են հասարակածի վրա և իրարից հեռու են 15°-ով: Որքա՞ն կլինի նրանց հեռավորությունը կմ-ով: Ընդունել, որ $1^0 = 111$ կմ:

57 Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը Կիևում (մոտավորապես՝ հս.լ.50° 30′ և արլ.ե.30° 40′) դեկտեմբերի 22-ին:

58 Լեռան գագաթի բացարձակ բարձրությունը 5895 մ է, իսկ հարակից իջվածքի բացարձակ բարձրությունը՝ -105 մ: Եթե իջվածքում օդի ջերմաստիճանը՝ +38°C է, ապա որքա՞ն կլինի այն լեռան գագաթին (հաշվարկը կատարել 5°C-ով):

59 Լեռը գտնվում է 45° զուգահեռականի վրա՝ ծովի ափին, այդ պահին ստորոտին օդի ջերմաստիճանը՝ 0°C է: Լեռան գագաթի բարձրությունը՝ 5000 մ է: Որքա՞ն կլինի մթնոլորտային ճնշումը լեռան գագաթին (հաշվարկը կատարել 100 մմ-ով):

60 Հաշվել տվյալ տեղանքում մագնիսական ազիմուտի մեծությունը, եթե ուղղության անկյունը 115° է, իսկ մագնիսական խոտորումը արևելյան է՝ 7°: